

վորությունից Սուրենը միշտ հետաքրքրվում էր կողկապան գործերով և երբ այստեղից մի լավ լուր էր ստանում, այնչափ ուրախություն ու օգետություն էին արտահայտում նրա նամակները»¹։ Նշանակում է Ս. Սպանդարյանը արշուրից աշխույժ նամակագրություն է ունեցել նաև կողկասի պարտիական կազմակերպության և Սո. Շահումյանի հետ, որոնցից ոչ մեկը (ոչ Սպանդարյանի գրածները, ոչ էլ Շահումյանի

գրածները) չի գտնվել։ Այս ուղղությամբ էլ պահանջվում է համապատասխան աշխատանք։

Աննկուն սեռայնությունների, խոհուն մտածողի երկերի ժողովածուն դաստիարակչական մեծ նշանակություն ունի կոմունիզմի շինարարների համար։ Մեզ թվում է ՍՄԿՊ Կենտկոմին առնթիվ Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալը պետք է ձեռնամուխ լինի Ս. Սպանդարյանի երկերի ժողովածուի հայերեն լեզվով հրատարակմանը։

Ա. ՄԵԼԻՔՈՆՅԱՆ

«Պայքար». № 38, 18 սեպտեմբերի 1916:

Վ. Ս. ՆԱԼԲԱՆԿՅԱՆ, *Թբիլիսին հայ մատենագրություն մեջ*, Երևան, Հայպետհրատ, 1958:

Մեր հիշողության մեջ դեռևս կենդանի է աչն հուզմունքը, որը մենք բոլորս, բոլոր թբիլիսացիներս և բոլոր վրացիներս ապրեցինք մեր անվանի մայրաքաղաքի՝ Թբիլիսիի 1500-ամյակի տոնակատարության օրերին։ Թբիլիսին գովերգող ինչքան բանաստեղծություններ ասվեցին, ինչքան շնորհավորանքներ ու նվերներ ստացավ նա Շատ բան ասվեց և գրվեց Թբիլիսիի մասին նաև եղբայրակից ուսպուրլիկաներում։ Օրինակ, Թբիլիսիի հորեկյանին Երևանի թերթերը հատուկ համարներ նվիրեցին, Թբիլիսիի մասին Հայաստանի ալլեալ ամսագրերում ևս բազմաթիվ հոդվածներ տպագրվեցին։ Արտակարգ ուրախություն պատճառեց թբիլիսցիներին երևանցիների մի մեծ նվերը՝ նրանք Երևանի մեծ ու գեղեցիկ փողոցներից մեկը Թբիլիսիի անունով կոչեցին։ Պարզ է՝ հայ ժողովրդի ազգային սրտահույզ արձագանքը թբիլիսցիների համար մեծ բավականություն էր։ Եվ դա բոլորովին էլ պարմանալի չէր, այլ ընդհանրապես, միանգամայն բնական էր։ Այդ ցույց սալու համար տեղին կլինեք զոնե մեկ անգամ հայացք ձգել մեր ժողովուրդների համագործակցության բազմադարյան պատմությանը։

Մոտավորապես երկու հազար հինգ հարյուր տարի է, ինչ կողք-կողքի ապրում են վրացիները և հայերը։ Դա կարճ ժամանակ չէ։ Այս ժամանակի ընթացքում բազմաթիվ ուժեղ պիտություններ են տապալվել ու ժողովուրդներ են սրբվել երկրի երևախ, իսկ մեր համեմատաբար վերջին ժողովուրդները այսպես անպարտիկորեն տարել են բազմատեսակ դժվարություններ, պահպանել իրենց և իրենց հիասրանչ կուլտուրան։ զրա պատճառներից մեկը այս երկու ժողովուրդների անխորտակելի բարեկամությունն է։ Նրանք դժվարության ամեն մի պահի օգնում էին միմյանց, և երբևէ չէին

թողնում եղբայրակցին վտանգի մեջ։ Հայաստանը առաջինն էր ստանում հարավից ներխուժած թշնամու հարվածը և դրանով թեթևացնում՝ Վրաստանի պաշտպանությունը։ Իր հերթին Վրաստանը հյուսիսից ներխուժող քոչվոր ցեղերից պաշտպանում էր դեպի Հայաստան տանող մուտքը։

Բայց այստեղ պետք է ասել, որ հարավից մեր ժողովուրդների վրա կախված վտանգը միշտ էլ ավելի մեծ է եղել։

Սակայն մեր բարեկամությունը միայն պայքարի ճանապարհին չէր հաստատվում։ Այն մեր ժողովրդի կյանքի ալլ կողմերը ևս ընդգրկեց։ Հայերի ու վրացիների միջև միշտ էլ եղել է սնտեսական և կուլտուրական կենդանի համագործակցություն։ ճանապարհները լինելին սոսկաական քարավաններով, իսկ հայ զավթիին հաջողվեց հայերեն կարգալ «Քարթլիս ցխովրերան» (Պատմություն վրացի) ու «Եռնանիկի նահատակությունը», ինչպես վրացիներ վրացիներն կարգալ Սանդուխտ կույսի նահատակության պատմությունը ու Բաղեսո առարչալի վարրը։ Մեր ժողովուրդների մոտիկ բարեկամության ապացույցն է նաև այն, որ վրացիներն ու բազմաթիվ հայերեն բառեր կան և ընդհանրապես։ Շատ բառեր, որոնք մինչև անգամ ամբողջովին վրացիներն են հնչում, ինչպես օրինակ՝ միամիտ, երկամալի (երկամյա) և այլն, ծագումով հայկական են։ Նույնպես և հայերենում կան մի շարք վրացական ծագում ունեցող բառեր։ Այդպես է նաև ճարտարապետության մեջ և արվեստի ալլ բնագավառներում, դիտություն մեջ և առօրյա կենցաղում։ Վրացական ստանդարտի վաղը այսօր այնպես է աճում Հայաստանի տար արևի տակ, ինչպես իր հայրենիքում։

Այս ամենը նկատի առնելով եղբայրակից հայերի սրտակից վերաբերմունքը Քրիստի հորելյանի նկատմամբ զարմանալի չպետք է լիվա, բանի որ Քրիստին իրոր հանդիսացել է հայ-վրացական կապերի կենտրոնը։ Այստեղ են ապրել բազմաթիվ նշանավոր հայ գործիչներ, և Հայաստանի պատմության շատ երևույթներ Քրիստի հետ են կապված։ Քրիստիում ստացավ իր կրթությունը և գրեց իր «Վերջ Հայաստանին» հայ մեծանուն գրող Խաչատուր Աբովյանի։ Այստեղ են ապրել հայ գրականության նշանավոր գործիչներ Բանաստեղծ Հ. Ալամ-դարյանը և դրամատուրգ Գ. Սունդուկյանը։ Քրիստիում հրատարակվում էին բազմաթիվ հայերեն ամսագրեր, թերթեր, այստեղ են տպագրվել անթիվ հայերեն գրքերի նվաճապետ, Քրիստիում էր ապրում և գործում հայ մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանը՝ Վրաստանի մեծ բարեկամը և սիրահարը, որը շատ հաճախ ասում էր. «Նրում մի ճանապարհ ունեինք, մի կույտուրա էր ծաղկում մեր մեջ և ապագան էլ միասնական է»։

Քրիստիցիները եղբայրակից երևանցիներից մի թանկագին նվեր են ստացան, Դա երևանի Պետական համալսարանի պրոֆեսոր Բանասիրական գիտությունների թեկնածու Վաչե Սմբատի Նալբանդյանի գիրքն է՝ «Քրիստին հայ մատենագրության մեջ» (սկզբից մինչև XVIII դարի վերջը)։ Գիրքը տպագրվեց Քրիստի հորելյանի օրերին և հեղինակը այն նվիրեց Վրաստանի մայրաքաղաք Քրիստի 1500—ամյակին։ Գիրքը միջին ծավալի է (170 էջ), մարտի և գեղեցիկ հրատարակված, այն խմբագրել է պրոֆ. Լ. Մելիքսեթ-Քեկրի։

Հնդհանրապետ հայտնի է, որ հայ մատենագրությունը Վրաստանի մասին բազմաթիվ անգրա-նահատելի տեղեկություններ է պարունակում, նրանց մեջ կան նաև տեղեկություններ Քրիստի մասին։ Գրքի նշանակության մասին հեղինակը նախարարում այսպես է գրում.

«Բազմաթիվ են հայոց հին և միջին դարերի մատենագրության մեջ վրաց հինավուրց մայրաքաղաքին՝ Քրիստին վերաբերող նյութերն ու տվյալները։ Դրանք հավաքելը, ի մի բերելը, մշակելն ու ընդհանրացնելը զիջարին մի գործ է։ Այս աշխատությունը նպատակ չունի տալ այդ բոլոր նյութերի ու տվյալների լրիվ և ամբողջական շարադրանքը։ Սույն գրությունով նպատակ ենք դրել ընթերցողին ամփոփելու հույսով ձևով ներկայացնել հայ մատենագրության մեջ Քրիստի պատմությանը վերաբերող մի շարք կարևոր տեղեկություններ միայն սկսած հին ժամանակներից մինչև XVIII դարի վերջը» (էջ 3)։ Սակայն այստեղ անհրաժեշտ է հիշել, որ հեղինակը միայն հայ աղբյուրները

չի երևան հանում, նա նշանակալից տեղ է հատկացնում նաև վրացական, հունական, արաբական, ռուսական և իտալական աղբյուրներին։

Սկզբից պետք է նշել, որ ամբողջ գիրքը գրված է վրաց ժողովրդի անցյալի մեծ իմացությամբ և սիրով։ Հեղինակը գրքի մեջ ընդգծում է այն տրագիցիոն բարեկամությունը, որ ունեցել են իրար նկատմամբ հայ և վրաց ժողովուրդները. «Դարերի խորքերից էլ գալիս երկու եղբայրակից ժողովուրդների՝ վրացիների և հայերի բարեկամությունը, որ նույնքան հին է, որքան իրենք՝ այդ ժողովուրդները։ Ծառ խորն են գնում բազմադարյան հնություն ունեցող այդ բարեկամության արմատները՝ հասնելով մինչև անհիշելի նախապատմական ժամանակները։ Հայկական ու վրացական պատմական հիշատակարաններում ու տարեգրություններում պահպանված, դարերի մշտնի միջով մեզ հասած ժողովրդական ավանդություններն ու գրույցները սրտագին խոսքերով են պատմում մեզ այդ բարեկամության ու եղբայրության մասին»,— գրում է հեղինակը և նույն տեղում էլ բացատրում, որ XI դարի վրացի հռչակավոր պատմիչ Լևոնտի Մրովելու խոսքով՝ հայերի նախահայր Հայկը, վրացիների նախահայր Քարթլոսը, ապա կովկասյան վեց այլ ժողովուրդների նախահայրերը՝ Բարգոսը, Մովկանը, Լեկանը, Հերոսը, Կովկասը, Եգրիսը հարազատ եղբայրներ են եղել՝ Նոյի սերունդներից՝ Թորգոմի որդիները։ Ինչպես ճամբարացիներն նշում է հեղինակը, հայերի և վրացիների այս հինավուրց բարեկամությունը էլ ավելի ամրացավ դարերի ընթացքում, երբ հայ և վրացի ժողովուրդները ուսուսի կովում էին օտարերկրյա զավթիչների ու ասիմիլյատորների դեմ։

«Գրեթե նույնն է ելել վրացիների ու հայերի՝ դառն փորձություններով լի պատմական ճակատագիրը, նրանք ամենուրեք միասին են եղել՝ և՛ ուրախության ու բերկրանքի ժամին, և՛ դառնության ողբերգական պահերին։ Այդ երկու ժողովուրդների մարտական բարեկամությունն ու փոխադարձ օգնությունն է եղել փրկության այն կարևոր, սուրբ օղակներից մեկը, որից կառնելով դուրս են եկել այդ ժողովուրդներն անթիվ ու անհամար արհավիրքների բազմաբարդ լարիերին թոսից, փրկվել ու հասել են մինչև մեր օրերը» (էջ 10)։

Այսօրինակ արտակարգ սիրով և ոգևորությամբ է գրում հեղինակը նաև Քրիստի մասին։ Սակայն այս անգամ ևս ավելի լավ կլինի խոսքը տանք հեղինակին. «Երկու եղբայրական ժողովուրդների բարեկամության համար մի տեսակ խորհրդանշան է եղել Վրաստանի

Հինավուրց մայրաքաղաքը՝ Թբիլիսին, Հաղար ու մի հրաշալիքներով ու հմայքներով առկեցուն աշդ քաղաքը, հիբավի, եղել է Անդրկովկասի ժողովուրդների եղբայրության բնօրրանը։ Վրաստանի մայրաքաղաքում դարեր շարունակ նույն կյանքով ու կենցաղով, նույն խոհերով ու երազանքներով են ապրել, նույն հոգսերով ու ցավով տառապել վրացին ու հայը՝ կիսելով և՛ ճակատագրի դառնությունները, և՛ հաղթանակի ուրախությունը»։

«Բր աշխարհագրական դիրքի պատճառով Հայաստանը մեծ մասամբ առաջինն է ենթակա եղել օտարերկրյա հարձակումների, իր վրա կրելով Անդրկովկաս ներխուժող հորդանների հարձակման առաջին հարվածները։ Եվ հասկանալի է, որ այս հանգամանքը էական դեր է խաղացել հայ ժողովրդի մոմոթներով լի դառը ճակատագրի մեջ։ Դեռևս վաղ դարերում գրեկվելով պետականությունից, ինքնուրույն քաղաքական իշխանությունից, շարունակ ենթակա լինելով սպասվող ու անակնկալ հարձակումներին, հայ ժողովուրդը շատ հաճախ ստիպված է եղել թողնել հայրենի երկիրը, սեփական տունն ու օջախը և փրկություն որոնել այլ երկրների տակ։ Ահա այս մոմենտներին, մեր ժողովրդի պատմության այս դառն ու զժնդակ պահերին պատրաստակամությամբ ու սիրով հային օգնության ձեռք է մեկնել եղբայր վրացին։ Մի անգամ չէ, որ վրաց մայրաքաղաքի հյուրընկալ պարսպները գործով ներս են առել ու պատրաստակար ծառայի չափազանց փրկված ու օգնության կարոտ հային։ Դարեր շարունակ այս դարձանահրաշ քաղաքում հայր առատորեն օգտվել է վրացու սրտաբաց հյուրընկալությունից և փոխարենը հատուցել նրան՝ իր անկեղծ ու անկաշառ բարեկամությամբ։ Այս է պատճառը, որ Թբիլիսին միշտ էլ այնքան թանկ է եղել ոչ միայն թբիլիսցի վրացու համար, այլև նրա համարադարացի հայի համար։ Եվ միանգամայն պարզ է, թե ինչու Թբիլիսիի գլխին եկած զրծրախտություններն ու արհավիրքները այնքան խորն են խոցել ոչ միայն թբիլիսցի վրացուն, այլև նրա համաքաղաքացի հայի սիրտը, և ընդհակառակը, վրաց մայրաքաղաքի ամեն մի հաջողություն բերկրանքով է լցրել ոչ միայն թբիլիսցի վրացու, այլև նրա հարևան հայի սիրտը» (էջ 10—11)։

Ինչպես պետք էր սպասել, գիրքը շարադրված է ժամանակագրական սկզբունքով։ Հեղինակը բնթերցողին պատմում է Թբիլիսիի պատմությունը և եթե զոյություն ունի հայ գրականության մեջ որևէ տեղեկություն, միացնում է դրան։

Բավական հետաքրքիր է Թբիլիսիի հիմնադրման մասին պահպանված համառոտ տեղե-

կությունը։ Այն XIII դարի հայ մատենագիր Մխիթար Այրիվանեցին գետեղել է իր «Պատմություն ժամանակագրական»-ի մեջ։ Այդ տեղեկություն մեջ մատենագիրը բերել է նաև վրաց թագավորների ցուցակը։ Չորս թագավորների անուններին դուգրնթաց Այրիվանեցին անհրաժեշտ է գտել որոշ ծանոթագրություններ կատարել։ «Փառնավաղ առաջին թագավոր», «Անդրիկ (վրաց աղբյուրների Բոկ, Աղերկը— է. Ջ.), որի օրով ծնվեց Քրիստոսը», «Միհրան՝ սա նունեի քարոզությունը հավատաց Քրիստոսին», «Կախտանդ, սա շինեց Տփլիսը»։

Չնայած որ Մխիթար Այրիվանեցու այս տեղեկությունները համընկնում են վրաց աղբյուրներին, սակայն ինչպես հեղինակն է նշում՝ «հայ մատենագրական աղբյուրը, այսպիսով, հավաստում է Թբիլիսին վրաց Կախտանդ քարոզապ թագավորի օրոք հիմնադրվելու մասին վրաց տարեգրությունների և ժողովրդական ավանդությունների մեջ պահպանված տեղեկությունները» (էջ 22)։

Բացի սրանից, այստեղ, բոտ հեղինակի, ուշադրության արժանի է հետևյալը։ Մխիթար Այրիվանեցին հոգևոր գեմբ էր. նրա համար Քրիստոսի ծնունդը արտակարգ եղելություն էր, ուրեմն ինչքան նշանավոր է եղել նրա համար Թբիլիսիի հիմնադրումը, որ նա այս երկու երեվույթները միասին է բացատրում (նույն տեղում)։

Առաջին անգամ Թբիլիսիի հիշատակությանը հայ գրականության մեջ հանդիպում ենք VII դարի հուլանավոր հայ աստղագետ, մաթեմատիկոս, աշխարհագրագետ Անանիա Շիրակացու գործերում։ «Վրաստանի քաղաքներն են՝ Տփլիսը, Մամշուգը, Մծխեթը...» — գրում է Անանիան իր «Աշխարհացոյցի» մեջ, նույն դարի պատմիչ Սերետսի մոտ ևս երկու անգամ հանդիպում ենք Թբիլիսիի անվան հիշատակությանը։

Հեղինակը իրավամբ մեծ տեղ է հատկացրել Թբիլիսիի մասին Մովսես Կաղանկատվացու հաղորդած տեղեկություններին։ VII դարի պատմիչ Մովսես Կաղանկատվացին իր «Պատմություն Աղուանից աշխարհի» աշխատության մեջ մանրամասնորեն պատմում է բյուզանդիայի կայսր Հերակլի և խաղարների միացյալ զորքերի կողմից 626 թվականին Թբիլիսիի պաշարման մասին։ Այս տեղեկությունը վրաց պատմագրության մեջ բաղմաթիվ անգամ վկայակոչվել է, և բնթերցողներին քաջ ծանոթ է։ Սա այն պատմությունն է, երբ պաշարված թբիլիսցիները ծիծաղելի դրության մեջ զցեցին կայսրին և խաղարների խաբանին. քաղաքի պարիսպների վրա դուրս եկած վրացիները բյուզանդացիներին ասում էին, «Զեր արքան

այծի մորուք ունի և որձակի վիզ», իսկ խագարներին մեծ զոռում էին ցույց տալիս, որի վրա մարդկային դեմք էր նկարված, ասելով՝ ահա ձեր խաբանքը: Այս տեղեկության կապակցությամբ հեղինակը նշում է. «Հիրավի, կարծես այն հերոսական զարաշրջանից է զալիս վրաց ժողովրդին առանձնահատուկ կենսախիղճ ոգին, մի ժողովուրդ, որը միշտ քայլել է գլուխը բարձր, չի ընկճվել ոչնչից, չի ճկվել ոչնչի առաջ՝ իր ճակատագրի ամենաուղբերգական պահերին անգամ: Կատակն ու սրամտությունը, ծաղրն ու ծիծաղը եղել է վրաց ժողովրդի անբաժանելի հատկությունը» (էջ 39):

Այնուհետև հեղինակը անդրադառնում է Անդրկովկասի ժողովուրդների արարների ղեմ մղած համատեղ պայքարի ժամանակաշրջանին: Նա վկայակոչում է Ղևոնդին (VIII դ.), Հովհաննես Գրախանակերտցուն (X դ.), Ասողիկին (XI դ.), Ստեփանոս Որբելյանին (XIII դ.), Նույնպես և վրացական աղբյուրները, այդ թվում՝ «Քարթլիս ցխտվեբան», «Աբո Ռբիլելու նահատակությունը» և այլն: Մավալուն մեշքերում է կատարել հեղինակը X դարի հայ պատմիչ Թովմա Արծրունու «Պատմություն տան Արծրունիաց» գրքից. որտեղ մասնաճանապարհներ են նկարագրված է Բուղայի կողմից 853 թ. Թբիլիսիի շրջանում և քաղաքի շինությունները հիմնականում փայտաշեն են եղել: Բուղան նախապես հրդեհ է առաջացրել և այնպես գրավել քաղաքը, ի դեպ, Բուղայի կողմից Թբիլիսիի գրավման այս տեղեկությունը հաջորդում են նաև արաբ պատմիչներ Ալի-ալ Մասուդին և Թարաբին: Հեղինակը հաստատում է նրանց վկայությունները հայ պատմիչների հաղորդած կարևոր տվյալներով: Թարաբիի տեղեկությունների վրա հենվելով հեղինակը գրում է, որ ղեռն IX դարի կեսերին Թբիլիսիում կար հայ բնակչություն, որը այն ժամանակ վրացիների հետ միասին կոչվել է Վրաստանի թշնամիների ղեմ:

Մեծ տեղ է հատկացնում հեղինակը Վրաստանի միավորման համար մղված պայքարի և Թբիլիսին օտարերկրյա զավթիչների ձեռքից ազատագրելու պատմությանը: Արտակարգ մանրամասնությամբ է պատմում Դավիթ Շինարարի կողմից թուրք-սելջուկների ղեմ մղված պայքարի և Թբիլիսիի ազատագրման մասին: Այն առթիվ, թե ինչ նշանակություն ունեցավ Վրաստանի պայքարը թուրք-սելջուկների ղեմ, հեղինակը գրում է.

«Անհրաժեշտ է նշել, որ Դավիթ Շինարարի այս հաղթական արշավանքներն ու նվաճումները մեծ նշանակություն ստացան ոչ միայն Վրաստանի միավորման ու վրացական միաս-

նական պետության հզորացման տեսակետից, այլև կարևոր նշանակություն ունեցան հարևան ժողովուրդների ազատագրման պայքարի ծավալման տեսակետից: Այս առիթով միանգամայն իրավացի է ակադ. Հ. Մանանդյանը, երբ գրում է. «Դավիթ թագավորի հաղթություններն ընդհանուր թշնամու ղեմ Վրաստանի սահմանակից հայաբնակ շրջաններում առաջ էին բերում ռզնորություն և հույս էին ներշնչում հայերին, որ Վրաստանի օգնությամբ իրենք ևս կկարողանան ոտքի կանգնել ու ազատվել օտար տիրապետությունից» (էջ 87):

Այնուհետև հեղինակը վկայակոչում է Կիրակոս Գանձակեցու տեղեկությունները Ջալալեդդինի և մոնղոլների կողմից Թբիլիսիի գրավման մասին: Արտակարգ կարևոր, հետաքրքիր տեղեկություններ է պահել Կիրակոս Գանձակեցին մոնղոլների ղեմ Ուլու Դավիթի ապստամբության վերաբերյալ:

Թբիլիսիի հիշատակմանը հանդիպում ենք ոչ միայն պատմական գործերում, այլև պոեզիայում: Ժամանակակից և ականատես Գրիգոր Խլաթեցին մի բանաստեղծության մեջ պատմում է Լենկ-Թեմուրի կողմից Թբիլիսիի առման մասին: Սակայն պարզ է, որ ավելի շատ տեղեկություններ տալիս են պատմիչները: Որինակ, XIV—XV դարերի պատմիչ Թովմա Մեծփեցին շատ արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Թբիլիսիի և ընդհանրապես Վրաստանի մասին: Նույնպիսի հետաքրքրական տեղեկություններ է պահպանել նաև նրա ժամանակակից Գրիգոր գրիչը, որը նկարագրում է Լենկ-Թեմուրի հինգերորդ արշավանքը՝ 1400 թ. ներխուժումը Վրաստան, պատմում այն սոսկալի արշավահանգույնների ու ավերամեծների մասին, որոնք հետևանք էին Լենկ-Թեմուրի աշխարհավեր արշավանքների:

«Այնքան ծանր էին այդ կռիվների հետևանքները, որ երկար, շատ երկար ժամանակ իրենց զգացնել էին տալիս Այսպիսի աշխարհավոր-ծան արշավանքներից հետո կանգուն մնաց վրաց ժողովուրդը՝ շնորհիվ իր հոգևոր, ֆիզիկական ու ուղեղական կարողությունների, օտարերկրյա զավթիչների ղեմ հանուն ինքնուրույն գոյության պայքարելու հաստատակամության, շնորհիվ այն արտակարգ սիրտ, որով համակված էր նա դեպի իր հայրենիք, որին այնքան նվիրված էր Քարտրանդ արվեստի երկիրը, ավերվեցին նրա քաղաքները, գյուղերն ու բերդերը, ոչնչացվեցին այգիները, ցանրերն ու ժողովրդի ապրուստի այլ միջոցները, կռիվներում բնկավ և զերկվարվեց բնակչության մի զգալի մասը, — այս բոլորից հետո էլ դարձյալ անարգ թշնամուն չհաջողվեց ընկճել վրաց ժողովրդի ազատասիր ու խրոխտ ոգին» (էջ 120):

Հայտնի է, որ XV դարի առաջին կեսում, Ալեքսանդր 1-ի օրոք (1412—1442) Վրաստանը թեթև շունչ քաշեց: Այդ ժամանակ տեղի ունեցավ հայ տարագիրների վերաբնակումը Վրաստանում, մասնավորապես Թբիլիսիում. «Մահմեդական տիրակալության պայմաններում օրավուր ծանրացավ հայերի վիճակը, որոնց գլխին շարունակ կախված էր ֆիզիկական բնաջնջման, անհետ կորչելու, բռնի արտագաղթի ահռելի վտանգը: Այս պայմաններում հայերի համար Վրաստանը բնականաբար պետք է հուսալի պատսպարան համարվեր, ուր եղբայրական վրաց ժողովրդի հյուրընկալ պատերի մեջ, նրա հարկի տակ կարելի էր ապահով կյանք գտնել» (էջ 121):

Հեղինակը բավական շատ տեղեկություններ է բերում Թբիլիսիի հետագա շրջանի մասին: Պետք է ասել, որ հայ պատմիչները, բանաստեղծները կամ սովորական գրիչները Թբիլիսիի կյանքի յուրաքանչյուր նշանակալից դեպք ուշադրության են արժանացրել: Շատ են այնպիսիները, որոնք Թբիլիսիի մասին հետաքրքիր նյութեր են պահպանել: Ահա նրանց անունները՝ Հովհաննես Երից, Անանիա Սեբաստացի, Հովհաննես Օտրեցի, Առաքել Դավրիժեցի, Հակոբ Կարնեցի և շատ ուրիշներ: Հայ նշանավոր բանաստեղծ և նկարիչ Հովնաթան Նաղաշը, որ Վախտանգ VI-ի հրավերով Թբիլիսի էր եկել, պալատական բանաստեղծ ու նկարիչ զարծել, գովերգում է Թբիլիսին.

Իովիմ սրախ ուրախակալն
Թիֆլիզ քաղաքն պատուական...

Առանձնապես երկար է կանգ առել հեղինակը Աղա Մահմադ խանի կողմից Թբիլիսիի առման վրա: Այս սոսկալի ողբերգությանն ականատես շատ հալեր նկարագրել են Թբիլիսիի գլխին եկած դժբախտությունը: Այսպես օրինակ, Կոստանդնուպոլսում մեկը (որի անունը հայտնի չէ) հրատարակել է մի գիրք, որը ներկայացնում է Թբիլիսիի գրավումից չորս ամիս հետո գրված մի այլ գրքի համառոտ տարբերակը: Գիրքը կրում է հետևյալ խորագիրը՝ «Համառոտ պատմություն անհնարին կոտորածով ատերման Տիֆլիս քաղաքի, զոր արար յելուզակօրէն պատերազմաւ աղա Մեհմեմետ խանն, փախուցեալ զծերունի արքան վրաց Հերակլ երկրորդ յամի տետուն 1795» (այս գրքի տեքստը առաջին անգամ հրապարակեց պրոֆ. Լ. Մելիքսեթ-Մեկը): Թբիլիսիի ավերումը մեծ տպավորություն է թողել միջնադարյան հայ պոեզիայի վերջին շրջանի անվանի ներկայացուցիչներից մեկի՝ Շամյի Մելիքի վրա, որը իր վերաբերմունքը բանաստեղծական հուզմանալից տողերով է հաղորդել: Հաջորդ դարում ոչ սակավաթիվ հայ գրողներ, զրանց մեջ նաև հայ նոր գրականու-

թյան հիմնադիր Խաչատուր Աբովյանը ստեղծագործություններ են նվիրել այդ ողբերգական իրադարձությանը:

Հեղինակն իր գիրքը վերջացնում է այսպես. «Հանրահայտ է, որ Թբիլիսին բացառիկ դեր է կատարել Անդրկովկասի ժողովուրդների կյանքում՝ XIX—XX դարերում: Այնտեղ են կազմակերպվել առաջին բանվորական մարքսիստական խմբակները, որոնք հետագայում մեծ դեր խաղացին ռևոլյուցիոն շարժումների ծավալման մեջ: Մեծ է Թբիլիսիի դերը ոչ միայն Անդրկովկասի ժողովուրդների քաղաքական կյանքում, այլև՝ կուլտուրայի, դրականության և արվեստների զարգացման մեջ: Թբիլիսին եղել է, հիմալի, հայ կուլտուրայի օջախներից մեկը:

Անդրկովկասի ժողովուրդների եղբայրության բնօրրանը՝ վրաց հինավուրց մայրաքաղաքը այսօր էլ պահպանել է իր հմայքը այդ ժողովուրդների համար, որոնց համար նա թանկ է, սիրելի ու հարազատ: Եվ միանգամայն բնական է, որ Թբիլիսիի կյանքը այնքան լայն արտացոլում է գտել ոչ միայն հայոց հին և միջին դարերի գրական հուշարձաններում, այլև նոր ու սովետական շրջանի գրական ստեղծագործությունների մեջ:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Վ. Նալբանդյանի գիրքը շատ կողմերից արժեքավոր աշխատություն է: Նրա հիմնական արժանիքն այն է, որ այստեղ ի մի են բերված այն անթիվ տեղեկությունները Թբիլիսիի մասին, որոնք պահպանվել են հայ հին մատենագրության մեջ: Հեղինակը գրքում գետնի վրա արժեքավոր վկայությունները հավաքել է ոչ միայն պատմական երկասիրություններից, այլև գրական այլ լույսի ճառագայթներից՝ ճանապարհորդների գրառումներից, մենագրություններից, գեղարվեստական ստեղծագործություններից, ձեռագրերի վրա կատարված մակագրություններից: Ծշմարիտ է, որ այս բոլոր տեղեկությունները վերաբերում են գերազանցապես Թբիլիսիի քաղաքական պատմությանը, բայց դա ունի իր պատճառը, որի մասին հեղինակը նշում է նախաբանում. «Անհրաժեշտ ենք համարում նշել, որ հայ մատենագրության մեջ պահպանված այդ տեղեկությունները գլխավորապես վերաբերվում են օտար արշավանքներին, ավարառություններին, գերեվարություններին և այլն: Մեր մատենագրության մեջ, տարաբախտաբար, քիչ են պահպանվել վրաց մայրաստեղծի ժողովրդի ներքին կյանքին, կենտոնին, նիստ ու կացին և սոցիալական պատմությանը վերաբերվող նյութեր, մի բան, որ բնորոշ է հայ մատենագրությանն առհասարակ» (էջ 3—4):

Այս գիրքը հետաքրքիր է ոչ միայն մասնագետ-պատմաբանների համար. ընթերցող լայն հասարակությունը ևս իր համար շատ հետաքրքիր նորություններ կգտնի նրա մեջ: Պետք է նշել, որ այդ տեղեկությունները չոր ու ցամաք ձևով չեն մատուցված: Ամբողջ գիրքը իրենից ներկայացնում է Թրիխտի պատմության կապակցված շարադրանքը, որտեղ ժամանակագրական հաջորդականությամբ տրված է այս համայն համապատասխան տեղեկությունը: Միաժամանակ պետք է ասել, որ Թրիխտի պատմությունը տրվել է Վրաստանի պատմության հետ սերտ կապակցված, որի շնորհիվ

հայ ընթերցողը շատ բան կիմանա ոչ միայն Թրիխտի, այլև Վրաստանի անցյալի մասին:

Գիրքը գրված է կենդանի և հետաքրքիր շուտով ենք, որ ընթերցողը մեծ հետաքրքրությամբ կընդունի այս գիրքը, որը թարգմանվել է և մոտ ապագայում կհրատարակվի վրացերեն: Իրանով վրաց հասարակայնությանն էլ հնարավորություն կտրվի ծանոթանալու այս արժեքավոր աշխատությանը:

ԼԱՇԱ ԶԱՆԱՇԻԱ

(Թրիխտի)

Ի. Հավախիշվիլու անվան պատմության ինստիտուտի գիտական աշխատակից

В. Д. МОЧАЛОВ, *Крестьянское хозяйство в Закавказье к концу XIX в.*, Изд. АН СССР, Москва, 1958, 492 стр.

Аграрный вопрос в целом и в особенности крестьянский вопрос В. И. Ленин был всесторонне разработан не только на материалах России, но и ряда стран Западной Европы и Америки. Такое пристальное внимание вождя пролетариата к экономическим и социальным отношениям, складывавшимся в эпоху капитализма, объясняется тем, что основным союзником русского рабочего класса в назревавших буржуазно-демократической и социалистической революциях могли быть только полупролетарские и вообще трудящиеся массы крестьянства.

Главными моментами при складывании капиталистических производственных отношений в деревне, определяющими собой лицо новых общественных классов, формирующихся с наступлением периода капитализма, Ленин считал, во-первых, процесс образования торгового земледелия, т. е. превращение натурального сельского хозяйства в товарное и, во-вторых, разложение патриархального крестьянства на сельскую буржуазию и сельский пролетариат¹. В подавляющем большинстве капиталистических стран мелкое товарное производство имеет столь широкое распространение, что данный уклад В. И. Ленин считал одной из основных форм общественного хозяйства, а мелкую буржуазию (крестьянство) одной из основных классовых сил общества².

Таким образом, процесс образования торгового земледелия представляет собой важную общественную закономерность. Наиболее полное уяснение этой закономерности и связанных с этим классовообразовательных процессов в деревне имеет большое значение для освещения социально-экономической истории Закавказья XIX в. Попытка выяснения данного вопроса на примере истории крестьянства Грузии, Армении и Азербайджана в пореформенную эпоху сделана в книге В. Д. Мочалова «Крестьянское хозяйство в Закавказье к концу XIX века».

В монографии В. Д. Мочалова освещается один из важнейших вопросов истории народов Закавказья к концу XIX в. Несмотря на то, что имеется много работ, освещающих развитие отдельных отраслей сельского хозяйства Грузии, Армении и Азербайджана, история развития сельского хозяйства всего Закавказья рассматривается в данной книге впервые. По охвату вопросов и по глубине разработки изучаемой проблемы труд В. Д. Мочалова выгодно отличается от ранее опубликованных и является ценным вкладом в литературу по изучению истории Закавказья.

Автор поставил целью показать состояние торгового земледелия в Закавказье в конце XIX в. и развитие основных отраслей сельского хозяйства, а также производительных сил и производственных отношений в земледелии. В. Д. Мочалов успешно справился с этой задачей, представив интересную, глубоко научную работу.

¹ См. В. И. Ленин, Сочинения, т. 6, стр. 305—307.

² Там же, т. 30, стр. 88.